*Խմբագրություն՝ 1*

# Անհատական պահատեղեր

Անհատական պահատեղերի վարձակալության ծառայությունը գործում է  Բանկի գլխամասային գրասենյակում, Կենտրոն, Նոր-Նորք, Զարգացում և Գյումրի 2 մասնաճյուղերում:

## Գլխամասային գրասենյակ, Կենտրոն և Նոր Նորք մասնաճյուղեր*

| Վարձակալության ժամկետ | Փոքր (սմ) | Միջին (սմ) | Մեծ (սմ) |
|---|---|---|---|
| | 43,0x27,0x7,5 | 43,0x27,0x16,0 | 43,0x55,0x16,0 |
| 7 օր | 2.000 ՀՀ դրամ | 4.000 ՀՀ դրամ | 10.000 ՀՀ դրամ |
| 14 օր | 4.000 ՀՀ դրամ | 6.000 ՀՀ դրամ | 12.500 ՀՀ դրամ |
| 1 ամիս | 6.000 ՀՀ դրամ | 9.000 ՀՀ դրամ | 15.000 ՀՀ դրամ |
| 3 ամիս | 8.000 ՀՀ դրամ | 18.000 ՀՀ դրամ | 25.000 ՀՀ դրամ |
| 6 ամիս | 15.000 ՀՀ դրամ | 25.000 ՀՀ դրամ | 30.000 ՀՀ դրամ |
| 9 ամիս | 20.000 ՀՀ դրամ | 28.000 ՀՀ դրամ | 35.000 ՀՀ դրամ |
| 12 ամիս | 25.000 ՀՀ դրամ | 33.000 ՀՀ դրամ | 45.000 ՀՀ դրամ |

*Ներառյալ ԱԱՀ

## Զարգացում մասնաճյուղ*

| Ժամկետ | Չափս (սմ) | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | 7x24x35<br>7x25x40<br>7x26x43 | 12x24x35<br>12x25x40 | 16x26x43 | 18x24x35 | 27x24x35 | 16x43x55 |
| 1 ամիս | 6.000 ՀՀ դրամ | 12.000 ՀՀ դրամ | 14.000 ՀՀ դրամ | 15.000 ՀՀ դրամ | 18.000 ՀՀ դրամ | 25.000 ՀՀ դրամ |
| 6 ամիս | 12.000 ՀՀ դրամ | 24.000 ՀՀ դրամ | 30.000 ՀՀ դրամ | 36.000 ՀՀ դրամ | 42.000 ՀՀ դրամ | 50.000 ՀՀ դրամ |

| 12 **ամիս** | 18.000 ՀՀ դրամ | 36.000 ՀՀ դրամ | 45.000 ՀՀ դրամ | 50.000 ՀՀ դրամ | 60.000 ՀՀ դրամ | 75.000 ՀՀ դրամ |
|---|---|---|---|---|---|---|

*Ներառյալ ԱԱՀ*

## **Գյումրի** 2 **մասնաճյուղ***

| **Ժամկետ** | **Չափս (սմ)** | |
|---|---|---|
| | 5,0x26,0x38,0 | 12,0x26,0x38,0 |
| 1 **ամիս** | 5.000 ՀՀ դրամ | 10.000 ՀՀ դրամ |
| 6 **ամիս** | 10.000 ՀՀ դրամ | 20.000 ՀՀ դրամ |
| 12 **ամիս** | 15.000 ՀՀ դրամ | 35.000 ՀՀ դրամ |

*Ներառյալ ԱԱՀ*

## **Անհատական պահատեղերի մինչև** 7 **օր վարձակալությամբ յուրաքանչյուր օրվա համար գործում են հետևյալ պայմանները***

| **Փոքր (սմ)** | **Միջին (սմ)** |
|---|---|
| 43,0x27,0x7,5 | 43,0x27,0x16,0 |
| 600 ՀՀ դրամ | 1.000 ՀՀ դրամ |

*Ներառյալ ԱԱՀ*

## **Պահանջվող փաստաթղթեր**

- Անձնագիր (ID)
- Սոցիալական քարտ

Օգտվելով ԱրարատԲանկի կողմից առաջարկվող անհատական պահատեղերի ծառայությունից՝ Դուք կարող եք վստահ լինել Ձեր կողմից ի պահ հանձնված թանկարժեք իրերի ամբողջականության և գաղտնիության հարցում:

- ԱրարատԲանկում անհատական պահատուփերի ծառայությունից կարող են օգտվել 18 տարին լրացրած անձինք:
- Պահատեղի դիմաց վարձավճարի չվճարման կամ պահատեղը պայմանագրով սահմանված ժամկետում չհանձնելու դեպքում Բանկը Հաճախորդից գանձում է տուգանք՝ սկսած 6-րդ օրվանից յուրաքանչյուր ուշացած օրվա համար՝ 1.200 ՀՀ դրամ:
- Հաճախորդի կողմից կորցրած կամ վնասված բանալու պատրաստման դեպքում

հաճախորդից գանձվում է 15.000ՀՀ դրամ:

**Կարևոր է իմանալ**

- Անհատական պահատեղերը նախատեսված են և վարձակալության են տրամադրվում դրամի, արժեթղթերի և փաստաթղթերի, ոսկու և ոսկերչական իրերի՝ ներառյալ թանկարժեք քարերը, գեղարվեստական նկարների, էլեկտրոնային հիշողության տարբեր տիպի կրիչների, այլ արժեքների (այսուհետ՝ արժեքներ) պահպանման համար:
- Անհատական պահատեղերում արգելվում է տեղադրել պայթուցիկ, դյուրավառ, քիմիական և հեղուկ նյութեր, ներառյալ՝ սնդիկ, եթերային յուղեր, ռադիոակտիվ տարրեր, թմրանյութեր, զենք, զինամթերք, կենսաբանական և միկրո օրգանիզմներ, ինչպես նաև կենսաբանական կամ մարդու առողջությանը վտանգ ներկայացնող նյութեր և իրեր:
- Ոսկի և ոսկերչական իրեր, ինչպես նաև այլ կոշտ իրեր Անհատական պահատեղի արկղում պետք է տեղադրել տուփերով կամ այլ փափուկ փաթեթավորմամբ, որպեսզի դրանք չվնասեն կամ չվնասվեն (քերծվածքներ) Անհատական պահատեղի արկղը վերցնելու և դնելու ժամանակ, արկղին, այլ իրերին կամ միմյանց հետ շփվելիս:
- Հաճախորդն Անհատական պահատեղերի տեղակայման սենյակի հատուկ կահավորված մասում կարող է գործողություններ իրականացնել տեղադրվող արժեքների և փաստաթղթերի հետ, ընդ որում՝ Անհատական պահատեղի տեղակայման սենյակում գտնվելու առավելագույն տևողությունը չի կարող գերազանցել 10 րոպեն:
- Պահատեղը ժամկետից շուտ հանձնելու դեպքում վարձակալական վճարի վերահաշվարկ չի կատարվում և որևէ գումար չի վերադարձվում:
- Հաճախորդն իրեն տրամադրված Անհատական պահատեղի բանալու կորստի կամ այն վնասելու 3 դեպքում պարտավոր է այդ մասին անմիջապես հայտնել Բանկին և վճարել նոր բանալու պատրաստման համար գումար՝ Բանկի սակագներով սահմանված չափով: Հաճախորդն իրավունք չունի ինքնուրույն պատրաստել իրեն տրամադրված բանալու կրկնօրինակը:
- Անհատական պահատեղի արկղը Հաճախորդը կարող է կնքել Բանկի կողմից առաջարկվող իրեն հարմար եղանակներից մեկով:
- Հաճախորդը, անհատական պահատեղի վարձակալման ժամանակահատվածում, Բանկի գործառնական օրվա ընթացքում կարող է մուտք գործել անհատական պահատեղերի տեղակայման սենյակ՝ ներկայացնելով անձնագիրը: